լինում է Հ (70), Ա (1), Ճ (300) = Հայ։

2. Գումարագրի ձևն է երկու տառերը իրար մօտ գրելը եւ նրանց թուական արժէքի գումարը նշանակում է մի այլ նոյն թուական արժէքն ունեցող տառը։ Օրինակ Ա. Բ., այսինքն՝ 1 + 2 այբուբենի թուական արժէքով կը լինի Գ (3), կամ ՃՃ (100+100)՝ գումարը կը լինի 200, որ է Մ։ Ուրեմն եթէ գրենք ՌՌՌ (1000 + 1000 + 1000 = Վ), Ա(1), ՌՌ (1000+1000 = Ս), ԺԺ (10+10 = 20 Ի), ԺԺԺ (10+10+10 = 30 Լ), կը կարդացուի «Վասիլ» (էջ 24)։

3. Եղբայրագիր կոչւում են այն ծածկագրերը, որոնց բուն տառերին փոխարինում են մօտի կամ կողքի ու եղբայրն եղող տառերը։ Օրինակ՝ Ա-ին փոխարինում է Բ-ն, Գ-ին՝ Դ-ն, եւ այդպէս շարունակ մինչեւ վերջ, իսկ Ա-ին փոխարինում է Ք-ն։ Օրինակ՝ ՆՁՏՔԲՇՇԵՎ տառերը կարդացւում են՝ «Ցովհաննէս» (էջ 36)։ Բնագրում Զ-ի տեղ գրուած է Ո, որ սխալ լինելով ուղղեցինք։

Ինչպէս ասուեց, այս ծածկագրութիւնների համար Պրոֆեսորը օգտագործել է մեծ թուով բնագրեր, որոնց ի մի հաւաքումը, դասաւորումն ու վերծանումը, իրապէս պահանջում է երկար ժամանակ, մեծ ճիգ ու ջանք եւ անսպառ եռանդ, որ արժանի են գնահատութեան։

Բերուած ծածկագրերի մէջ են մտնում նաեւ Նոր Ջուղայի գրչագրերի մէջ եղածները, որոնց մեծ մասը վերծանուած են տպագրուած ձեռագրացուցակներում։ Ն. Ջուղայի «Ձեռագրաց ցուցակի» Ա. հատորի մէջ նկարագրուած մի Աւետարանը, ցուցակի՝ համար 203 (էջ 250), ոչ թէ պատկանել է Ս. Ամենափրկիչ վանքին, ինչպէս կ'ըսէ Աբրահամեան (էջ 48), այլ՝ Սանգիբարան գիւղի մի անհատի, որն իր հետ Հայաստան է տարել։ բայց մեզ հնարաւոր չեղաւ ստուգել՝ թէ արդեօք յանձնուա՞ծ է Մատենադարանին կամ ոչ։ Այդ գրչագրի մէջ եղած ծածկագիրը՝ որ վերծանուած չէ եղել՝ հոս վերծանուել է «Ձիք տէր Ստեփանոս» (էջ 51)։

Սոյն վերծանութիւնից յետոյ, գրքի հեղինակը Տէր Ստեփանոսի անուան վերայ գրուած «Ձիք» ածականի մասին գրում է.

««Ձիք» բառի ստուգաբանութիւնը մենք դժուարանում ենք տալ. արդեօք մականո՞ւն է՝ բարձրահասակ, ամրակազմ, հաստատակամ, թէ մի այլ նշանակութեամբ. բայց որ նման անունով մարդ եղել է Նոր Ջուղայում, այդ մասին վկայութիւն ունենք Զաքարիա Քանաքեռցու մօտ...» (էջ 51)։

Որպէս լուսաբանութիւն ասենք, որ «Ձիք» ածականը տրուել է նրան, նրա երկայնահասակ լինելուն համար։ «Ձիք տէր Ստեփանոս»ի մասին, Հ. Ներսէս Ակինեանը «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ (1947 թ. Փետրուար, էջ 112), մի ուսումնասիրական յօդուած ունի տարադրած։ Բազմավաստակ գիտնական Յ. Անասեանը, իր «Հայկական մատենագիտութիւն» Ա. հատորի մէջ (էջ LXX), բերել է նրա մի բանաստեղծութիւնը, գրուած Շարականների հեղինակների մասին. նրա մի այլ բանաստեղծութիւնը բերուած է Ամենափրկիչ վանքի գրչագրերի ցուցակի Ա. հատորում (էջ 763–764). անունը յիշուած է նաեւ մի քանի այլ տեղերում։

Կէտագծերով ծածկագիր կայ նաեւ. վանքի՝ համար 533 «Ցայսմաւուրք»ի մէջ, որի մասին յիշուած է գրչագրերի ցուցակի Ա. հատորում (էջ 233), բայց բերուած չէ ծածկագիրը, որը 5 տող է եւ կարդացւում է. «Տէր Ցիսուս որդի Մարիամու, սա ՆՆՋԷր առիւծի խորխորատին...» եւ այլն, (գրչագրի թերթ 324ա)։

«Հայկական ծածկագրութիւն» գրքում Ջուղայի գրչագրերի բուն համարների տեղ, բացառութեամբ մէկ-երկուսի, յիշուած են ցուցակի հերթական համարները։ Անհրաժեշտ է յիշել, որ այդ համարները Ա. հատորի մէջ դրուած են հերթական համարների ներքեւում եւ առնուած փակագծերի մէջ. դրանցից «Ամենափրկիչ» եւ Նոր Ջուղայի բոլոր եկեղեցիների անուններով եղածները պատկանում են վանքին. սակայն, ցաւօք

սրտի, ցուցակում նշուեր է բան Ս. Տէր Աւետիսեանի կազմածի եւ ոչ թէ բան սրբագրուած համարի, երբ դեռեւս բերուած չէին վանք։ Այդտեղ յիշուած ԳԳ. (գզրոցի) համարներն եւս աւելորդ են, որովհետեւ այժմ բոլոր գրչագրերը (բացառութեամբ թանգարանում ցուցադրուածների), տեղաւորուած են մէկ առանձին սենեակի մէջ։

Պրոֆեսորը Նոր Ջուղայի «Ցուցակ»ի թիւ 351 եւ բուն թիւ 176 ձեռագրի ծածկագրի մասին խօսելուց յետոյ եւ նոյնին գրչութեան թուականի մասին աւելի լուսաբանութիւն տալով, աւելացնում է. «Մինասեանը կարծում ենք սխալուել է, երբ ՌՃԶԹի վերջին Թ-ն միաւորի թուանշան է համարում եւ թուականը վերծանում 1740» (էջ 130)։ Ուրեմն ըստ Աբրահամեանի Թ-ն թուականի միաւորը չէ, այլ թուական է նշանակում, որով եւ եղբայացնում է, որ գրչագիրը գրուել է 1731 թուին եւ ոչ թէ 1740ին։

Ինչպէս յայտնի է, անցեալում առավորաբար «թուական» բառը գրում էին ոչ թէ թուականից յետոյ, այլ առաջ, ինչպէս որ հէնց յիշեալ գրչագրի յիշատակարանում եւս գրուած է.

«Արդ գրեցաւ ձեռնադրութեան տեարս ի թուականս հայոց (ընդգծումը մեր կողմից, Լ.Մ.) ՌՃԶԹ Սեպտեմբեր ԺԵ (15)...»։

Ուրեմն նախ, քանի որ սկզբում «թուական» բառը յիշուած է, անհնար է որ կրկնուի եւ ՌՃԶ-ի հետեւող Թ-ն եւս «թուական» նշանակի. փակ երկրորդ՝ Ղազար Ջահկեցին, որի ժամանակ է գրուել գրչագիրը», կաթողիկոս է ընտրուել 1737ին եւ օծուել 1738 թուականին. ուստի եթէ նրան որպէս կաթողիկոս է յիշում, ուրեմն անհնար է որ գրչագիրը գրուած լինի 1731 թուականին, երբ այդ ժամանակ նա դեռեւս կաթողիկոս չէր ընտրուել։

Ինչպէս գրութեանս սկզբում տարտինք, «Հայկական ծածկագրութիւն» գիրքը մի կարեւոր ու արժէքաւոր աշխատութիւն է. ուստի այս եւ նման փոքր վրիպումները երբեք չեն նսեմացնում այն մեծ ճիգը՝ որ տարուել է դրա համար։

Լ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՀԱԶԱՆԳ

Գրեց ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ, Ֆիլատելֆիա, 1980։

Վահէ Օշական 1980ը նախընտրեց տալու համար իր սեփական «Ահազանգ»ը՝ որ կը հնչէ գոյութենապաշտ-մարդկայնապաշտ անդատտանի մը մէջ, ուր մարդն է՝ որ ինքզինքը կ'որոնէ, «չուանէն կախուած լաթ»՝ իր ինքնութիւնը կ'ուսումնասիրէ (իրն է բացատրութիւնը), կը տագնապի, կը պայքարի՝ դիմակաւոր, խեղաթիւրուած կեանքին եւ մահուան մէջեւ։

Թղթատումը նախ, ապա համբերատար ընթերցումը հատորին (ունի 17 խորագիրներ եւ կէտադրութիւնը գրեթէ զանց առնուած է, չունի նաեւ էջագրում) կը համոզէ քեզ իսկոյն, որ գործ ունիս գրական ինքնատիպ ստեղծագործութեան մը հետ։

Վ. Օշականն է, շմոռնանք։ Իրեն համար վարեւոր չէ թէ իր ընթերցողներու քանակը ի՛նչ պիտի ըլլայ եւ ո՛րքանով պիտի հասկցուի։ Կը սիրէ նախ իր նախնտրած ձեւով ժայթքեցնել ինչ որ իր ներսն է՝ դիզուած կեանքին, առօրեային, մարդերէն. յաջորդ քայլը կը պատկանի այլեւս ընթերցողին եւ անոր ըմբռնումներու հատոյթին։ Այլաբանութիւնը, պատկերաւոր շուրերը եւ խորթ նութիւնը — յաճախ նուրբ մտածումի մը փայլատակումը կամ վերլուծումի մը եղբակացումը — թեւ թեւի կը քարշեն գրեթէ անբաժան։ Ի՛ր լեզուն է, հարազատ. կիսատ, անկապ, անհեթեթ նկատուելու չափ արտառոց. սեանդակաւոր գրական հանրագիտարան։

© National Library of Armenia

դերձանքներ նախընտրողը պիտի գրկուի անկասկած՝ Օշականի կողմէ պատրաստուած սա արտասովոր, բայց եւ այնպէս ճոխ խնջոյքէն։ Այս «մթութիւնը», սակայն, կարելի չէ անպայման թերութիւն նկատել, այլ գրական ճաշակի եւ ստեղծագործական ըմբռնումի մը խնդիր է պարզապէս։ Շէյքսփիր՝ ոմանց համար անհանդուրժելիօրէն բուռ է (Տարվին), իսկ Գալզաքի մը համար ալ՝ «Աստուծմէ յետոյ՝ Շէյքսփիր կու գայ»։

Մեր մօտ գուցէ աննախընթաց, դրեթէ անսովոր է Օշականեան «ըմբոստ» եւ «անհանդուրժող» շունչը կրող այս գիրքը։ Հետեւաբար, չեմ զարմանար՝ եթէ շատեր ծիծաղելով կամ որոշ վերապահութեամբ, չընելու համար՝ բացարձակ անտարբերութեամբ, դիմաւորեն անոր երեւումը։ Այս պարագան կը մերկացնէ, սակայն, գրական ըմբռնումի այն հիմնական հարցերը՝ որոնց ակնարկեցինք։

Հատորին մէջ խտացուածը ծանր է խկապէս, իր տարողութեամբ։ Հոն յայտնուողը՝ մարդկային էութիւնը պրկող տառապանքն է, անհանգստութիւնը, կիզիչ մարդերու պժգալի դիմակը, կեանքը՝ իր անկողնին մէջ խեղդողներու խելառ ճիգը, անհարազատ ապրելակերպը եւ անպատասխանատու գործելաձեւը անոնց։

Օշական՝ մեր գրականութեան «ըմբոստն» է։ Այս հատորը կու գայ վերջնականօրէն իրեն տալու այս տիտղոսը։ Որովհետեւ, նախ՝ ունի ան իմացական տագնապ մը, որ անժխտելիօրէն կը բխի նեխած չրջապատէն, դիմակափոխուած ընկերութենէն եւ անոր՝ վայրէջքի մը վտանգաւոր թաւալումը ունեցող երեւոյթներէն։ Վ. Օշական ունի մարդկային իրաւ տագնապ, տառապող զգայուն մտածում, որ թէեւ ինքնատիպ զգեստաւորումով կը ծածկուի, սակայն առ հասարակ կը դրսեւորուի խարանող, դիմադարձող, մերժող ու բողոքող կեցուածքով ու... ահազանգով։ Զ'ընդունիր կեանքը գրկել՝ ա՛յնպէս ինչպէս ստիպա տրուած է իրեն, ինչպէս հրամցուած է իրեն, ինչպէս կը ցուցադրուի իրեն։

Այս շունչը շեղբի նման կը յայտնուի մանաւանդ գիրքին երկրորդ կէսը գրաւող՝ Լիբանանի վերջին դէպքերու պատկերներուն մէջ, ուր մարդուն, քաղաքացիին ապրած ֆիզիքական ու թատրոնական ծանր, քայց եւ այնպէս նեխած իրականութեան ողբերգութիւնն է որ կ'արիւնի։ Օշական, կը գրէ դառնութեամբ՝ խըստացուած.

«Հէ՞յ դուք յոգնած ու միամիտ
լորամարգեր
հեռո՛ւ կեցէք Լիբանանի գեղածիծաղ լեռներէն
ետ դարձէք, շո՛ւտ, փախէ՛ք, գացէ՛ք
հոս բնութեան ու մարդկութեան օրէնքները տարբեր են»։

կամ՝

«Լիբանանը ա՛լ կը սկսէր քաւել մեղքը իր ոճիրին ու կրել բեռը իր պատիժին»։

Օշականի Ահազանգը ուժեղ է, անկեղծ, ինչպէս փնքը...։

Գորիս Փասթեռնաք կը գրէր. «Մարդը պէտք է ըլլայ իր ժամանակի վկան»։ Օշական կը սիրէ այդ սկզբունքը, այդ հարազատ ուղին, յաճախ չրջապատուած մակարոյծներով, որոնք անցարգելներ կը բարձրացնեն։ Օշական կը սիրէ այդ դըժուարը, քայց կու տայ ի՛րը, անձնականը, այնքան բնորոշիչ կերպով, ինքնատիպ։ Օշականն ալ — ինչպէս շատերը այս մոլորակի բնակիչներուն — չէ կրցած ապրիլ կեանքը եւ շնչել անոր հրաշալիքները, անոր բովանդակ մաքրութեան մէջ։ Այդ հրաշալիքները դաշունահարող երեւոյթներ, իրականութիւններ կան։ Ահա շարժառիթ մը իր անհուն ճմլումին ու գալարումին՝ Լիբանանեան պատերազմի կամ մարդկային եպերելի ու պժգալի կեանքին ապրումներուն դիմաց. ահա իր տառամը։ Ակէ կը յանդգնայ իր խիստ մտրակումը։

Օշական կը խոստովանի թէ ինքն է

«Դաշտերը տառապանքի լուռ մարդերու ընդրիմին»,

որուն դիմաց, սակայն, չի գիտեր համակերպիլ։ կը դիմադարձէ՝

«Բոլորիդ հետ, մարդ թէ Աստուած՝ հաշիւ ունիմ մաքրելիք»։

Օշական անհանգիստ է։ Թթուտով կը խօսի, կը ապառնայ, կը խարանէ, կ'ահազանգէ։ Այս դառնութեան պէտք է վերագրել յաճախ կիրարկած օտար բառերը, օտար ատութիւնները, մինչեւ իսկ անպարկեշտ նկատուած որոշ արտայայտութիւններ։

Օշական համամարդկային է միաժամանակ։ Բոլոր պատկերները որ մաղմով կը դէմ՝ իրենց մերկութեամբ զարհուրելի են, որոնց մասին մարդկի յաճախ չեն խօսիր, զանոնք խաւարի մէջ կը ստեղծեն ու կը ապաննեն, որոնց դիմաց քառասմբակ կը վազեն՝ չչելու համար անոնց խարանող արձագանգը ու կը պահուրտին, կ'անհետանան գոց փեղկերու ետեւ։ Օշական, այս բոլորին դիմաց, անհանգիստ է, ախտաճանաչում կ'ընէ տառնց կարմրելու, կը դաշունահարէ մեղքերը ու մարդուն դիմակափոխուած ինքնութիւնը, գիտակցութիւնը, եւ կը մնայ անդրդուելի՝ համոզումներու իր պատնէշին վրայ։

Օշական՝ նաեւ գոյութենապաշտ մտածող մը։ Սակայն կը ծագի իր տեսակէտներէն, իր ըմբոստ ու վերլուծող մտքի կառոյցէն։ Գոյութենապաշտ որակեցինք զինքը, որովհետեւ գրական-փիլիսոփայական այդ շարժումը բնորոշուած է աւանդական փիլիսոփայութեան եւ արդի ընկերային ճանկռտուած կառոյցին դէմ յատակօրէն ցուցաբերած անհանդուրժողութեամբ, բողոքով եւ ըմբոստացումով։

— «Ա՞ս է եղեր կեանք ըսուածը.—
յիսուն տոպրակ կոխկռտուած հին տաշեղ ցուցափեղկի դագաղիս»։
— «Ոչ ոքի կրնամ ուղղութիւն հարցնել քանի որ չեմ գիտեր թէ ո՛ւր կ'երթամ»։
— «Կեանքը մահուան դիմակներէն մին ըլլալու է»։
— «Օգուտ չունի կեանքը բոզի գուրգուրանք է ինքնիր մահով պիտի ապրի»։
— «Աստուած մեռաւ որովհետեւ չէզոք մնաց մարդոց կռիւներուն մէջ»։
— «ա՞յս է կեանքը անկարելի միակ կարելիութիւնը ուրեմն... »
— «այս երկրին մէջ բախտաւոր է այն շունը
որ իր կեանքի կարճ ու անմեղ հրապոյրի գագաթին
օթոսթրատը կտրած ատեն, լոյս աչքով, մէկ ջղագալար արկածով կը մեռնի...»,

թէեւ կը փորձէ նաեւ սա կեանքի խորտուբորտ ոլիկիանին մէջ գտնել

«Լաստ մը, յոյս մը կարելի է դեռ կ'ազատիմ անդին կ'անցնիմ»։

Օշական սերտ կապ ունի գոյութենապաշտ դպրոցին հետ, որովհետեւ իր մէջ կայ ուժեղ սէրը ըլլալու ազատ, անկախ, անկաշկանդ՝ իր մտածումին մէջ, արտայայտութիւններուն մէջ, օրէնքներու, չրջապատի, ընկերութեան եւ կամ կողմնակի վարկածներու դիմաց. ճիշտ ա՛յնպէս, ինչպէս են ներկայացուցիչները՝ այսպէս կոչուած «ըմբոստ գրականութեան»։

Օշական ազատ կը զգայ ինքզինքը՝ ինքնատպութիւն մը ունենալու համար։ Անհիմն չէ իր պահանջը, իր տեսիլը իրրեւ արուեստագէտ։ Օշական հաշիւ չունի տալիք. կը պահանջէ։

«Անանց տուէք ըսածիս» կը գրէ՛ էջի մը մէջ։

Կ'արժէ «անանց տալ» իրեն, որովհետեւ այս անգամ՝ չհինցող ու վաւերական ստեղծագործութիւն մը կը թուի իր ձայնը, «Օշականեան Ահազանգը»։

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

© National Library of Armenia